ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՈՒՂԻ

(ծննդյան 75-ամյակի առթիվ)

Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը շատ զուսպ էր իր գնահատականներում, բայց անկեղծորեն ուրախանում էր գիտության մեջ նոր ոտք դրած շնորհալի երիտասարդների հաջողություններով, բարերար ազդեցությամբ ուղղություն տալիս նրանց ստեղծագործական վերընթացին: Վիթխարի գիտելիքների տեր գիտնականը մի առանձին ջերմությամբ էր կապվել իր առաջին հրապարակումներով ուշադրության արժանացած Համբարձում Կարապետյանի հետ՝ արժևորելով երիտասարդ պատմաբանի շնորհալի գրիչը, պատմական իրադարձությունների խորքը թափանցելու և հետաքրքիր ընդհանրացումներ կատարելու ձիրքը, վիճելի գիտական պրոբլեմները նորովի լուսաբանելու ունակությունը:

Հ.Կարապետյանի ստեղծագործական ուղին սկսվել է 1950-ականների վերջերին: Կիրովականում (Վանաձոր) միջնակարգ կրթությունը ստացած և Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը բարձր առաջադիմությամբ ավարտած երիտասարդը մի կարճ ժամանակ գլխավորում է մայրաքաղաքի արդյունաբերական խոշոր ձեռնարկություններից մեկի կոմերիտական կազմակերպությունը: Այդ ընթացքում է, որ նա գրում է իր անդրանիկ մենագրությունը՝ նվիրված Անդրկովկասի հեղափոխական շարժումների մեջ Հայաստանի երիտասարդության դերի լուսաբանմանը: Ժամանակագրական առումով դա մեզանում առաջին ուսումնասիրությունն էր, ուր բացահայտված էին Հայաստանի երիտասարդության հերոսական պայքարի նորանոր դրվագներ: Առաջին մենագրության ջերմ ընդունելությունը մեկընդմիշտ որոշում է հեղինակի աշխատանքային ուղին՝ գրահրատարակչություն և գիտություն:

Պետական հրատարակչությունում պաշտոնավարության տարիներին Հ.Կարապետյանը շարունակեց մնալ գիտության ոլորտում, հանդես եկավ մի շարք նոր ուսումնասիրություններով, իսկ 1960թ. սկսած՝ լիովին նվիրվեց գիտական և դասախոսական գործունեության: 1960 – 1970-ական թվականները եղան պատմաբանի համար ամենաբեղմնավոր տարիները: Արդյունքը՝ շուրջ 30 գրքեր ու գրքույկներ, հարյուրավոր հոդվածներ հանդեսների և թերթերի էջերում: Այդ շրջանի նրա ուսումնասիրություններն աչքի են ընկնում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ գրված արխիվային փաստաթղթերի ու նյութերի առատությամբ, պատմական իրադարձությունների քննության ու լուսաբանման ոչ ստանդարտ մոտեցմամբ, մաքուր գրական լեզվով նյութի մատուցմամբ:

Այդ տարիների գործերից առանձնահատուկ արժեք ունի «Մեծ պայքարի մարդիկ» եկհատոր աշխատությունը: Հ.Կարապետյանն առաջինն էր, որ

բազմակողմանի ուսումնասիրեց ու լուսաբանեց հայ ժողովրդի արժանավոր զավակներ Վլադիսլավ Կասպարովի, Ալեքսանդր Բեկզադյանի, Սահակ Տեր-Գաբրիելյանի, Սարգիս Կասյանի, Հովսեփ Լազյանի, Սարգիս Լուկաշինի և այլոց կյանքն ու գործունեությունը, արժևորեց նրանց ավանդը համառուսաստանյան հեղափոխական շարժման մեջ: Նրանցից ոմանց բախտ վիճակվեց դառնալու Խորհրդային Հայաստանում սոցիալիզմի կառուցումը գլխավորող կուսակցական և պետական խոշոր գործիչներ: Սրկհատորյակի նյութն ընտրված հերոսների գործունեության գիտական շարադրանքը չէ միայն: Հայկական կյանքում տեղի ունեցած պատմական իրադարձությունների համայնապատկերի վրա ցույց է տրված ժամանակաշրջանի հայ քաղաքական կուսակցությունների գործնական աշխատանքը, շեշտադրված է նրանց ազգապարական պայքարը, վերլուծված են հայկական մամուլի շուրջ քսան օրգանների բազմարնույթ նյութերը, որոնք անմիջական աղերսներ ունեին քննության առնված հարցերի հետ: Տպավորիչ էր Հ.Կարապետյանի բանավոր խոսքը: Երևանում, Թբիլիսում, Բաքվում, Մոսկվայում, Լենինգրադում, Ուլյանովսկում, Ռոստովում և այլուր կազմակերպված գիտական կոնֆերանսներում ու գիտաժողովներում նրա զեկուցումները և հաղորդումներն իրենց նորույթներով ու անսպասելի հարցադրումներով արժանանում էին մասնագետների հետաքրքրությանը և բարձր գնահատականին: Այդ ամենի շնորհիվ ոչ միայն Հայաստանի, այլև Անդրկովկասի պատմաբանների շրջանում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարապետյանը հայտնի անուն էր՝ որպես Հայաստանի ու Անդրկովկասի հեղափոխական շարժումների և կոմունիստական կազմակերպությունների պատմության խոր գիտակ:

Հ.Կարապետյանի աշխատությունների մեջ կարևոր տեղ են գրաղեցնում հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հարցերը: Թեև ոչ հանգամանորեն, դրանք առկա են արևելահայության հեղափոխական պայքարին նվիրված նրա աշխատություններում և բազմաթիվ հոդվածներում: 1980-ական թվականների սկզբներից պատմաբանն ամբողջովին նվիրվեց ազատագրական շարժման հարցերի ավելի խոր ուսումնասիրմանը և քննությանը:

1992թ. լույս տեսավ Հ.Կարապետյանի «Անդրանիկ» երկը՝ երեք գրքով: Այդ մեծարժեք գործը պատմաբանի՝ տարիների քրտնաջան աշխատանքի արդասիքն է, մի աշխատություն, որը ժամանակին, ցավոք, ինչպես հարկն է, չարժանացավ մամուլի ուշադրությանը և սպասում է արժանի գնահատման: Այն հայ ժողովրդի ազգային հերոսի նկատմամբ պատմաբանի անհուն սիրո վկայագիրն է: Հենց այդ սերն է նրան ուժ հաղորդել տարիներ շարունակ պրպտել արխիվային ֆոնդերը, հայտնաբերել անհայտ վկայություններ՝ մեծ ֆիդայապետի ու զորավարի մասին: Անդրանիկի մարդկային կերպարը պատմաբանի համար անսակարկ հայրենասիրության ու հանդուգն խիզախության, միաժամանակ դիվանագիտական լրջախոհության ու ժողովրդի ճակատագրի նկատմամբ առելեցուն պատասխանատվության ճշմարիտ չափանիշն է:

Աշխատության մեջ պատշաճ պատմաքննական վերլուծության են ենթարկված հերոսի մեծ կյանքին զուգորդված բոլոր կարևոր իրադարձությունները և դեպքերը: Արժեքավոր են հետազոտության տարբեր էջերում փիլիսոփայական-խոհական երանգներով հեղինակի դատողությունները հայրենիքի, ընտանիքի, ընկերասիրության, բարոյականության, հայ ժողովրդի ազգային ավանդույթների մասին: Այդ դատողությունները խիստ ուսանելի են հենց այսօր, երբ օտար կեղծ արժեքներն անարգել խուժում են մեր կյանքից ներս, արագորեն խաթարում դարերով ստեղծված հոգևոր աշխարհը, ավերներ գործում հայ ժողովրդի բարոյական ըմբռնումների և ազգային նկարագրի մեջ:

Հ.Կարապետյանն ավելի քան 40 տարի դասավանդել է Հանրապետության տարբեր բուհերում, գլխավորել պատմության ամբիոններ, գրել մեթոդական ձեռնարկներ, վայելել բուհական կոլեկտիվների հարգանքը:

Վերջին տարիներին տեղի է տվել գիտնականի առողջական վիճակը: Չնայած դրան՝ նա կարողացավ ավարտել Սևրի դաշնագրի մասին մենագրությունը, իսկ ներկայումս ձեռնամուխ է եղել վաղեմի մտադրության իրականացմանը՝ Աղասի Խանջյանի մասին գիտական աշխատության ստեղծմանը:

Վաստակաշատ հոբելյարին ցանկանում ենք քաջառողջություն, երկար տարիների կյանք: Հուսով ենք, որ առաջիկայում նա ավարտին կհասցնի իր 40-րդ գիրքը:

Հ.Ռ.ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս